Զեղեա

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Սուրիկ Սարգսյան

Հեռախոս՝ +374 94 18 09 64

Զեղեա գյուղը Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանում, փռված է Վարդաբլուր և Հարսնասար լեռների ստորոտում՝ ծովի մակերևույթից բարձր է 1500-1600 մ, մարզկենտրոն Եղեգնաձորից գտնվում է 20 կմ հարավ-արևելք: Սահմանակից է մարզի Ագարակաձոր, Վայք, Մալիշկա և Ազատեկ գյուղերին:

Գյուղն ավելի հին է քան ենթադրվում է, որի վկայությունն են զարդաքանդակներով խաչքարերը և հունական տառերով գերեզմանաքարերի արձանագրությունները, ինչից կարելի է ենթադրել, որ այստեղ ապրել են հայեր, հույներ, ադրբեջանցիներ, որից հետո այս գյուղում իրենց հանգրվանն են գտել Նախիջևանից տեղահանված հայերը:

Գյուղի շրջակայքում կան խաչքարեր, մոտակայքում՝ Քարատակ գյուղատեղին: Գերեզմանաքարերի արձանագրություններից ենթադրվում է, որ բացի Քարատակից եղել է ևս մեկ գյուղատեղի, որոնցից մեկը հունական է եղել: Հին հայկական գերեզմանոցի մոտակայքում հայտնաբերվել է ջրաղաց, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ գյուղի բնակիչները նախկինում էլ զբաղվել են հացահատիկի մշակությամբ:

Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ դեռ միջնադարում գոյություն է ունեցել Վայոց ձոր գավառի Զեդյա գյուղը: Գյուղի պատմության վերաբերյալ այլ մանրամասներ չկան: 1988 թվականին Ադրբեջանից՝ Նախիջևանի շրջանի Ազնաբերդ գյուղից Հայաստանի Հանրապետություն արտագաղթած հայ ընտանիքներով վերաբնակեցումից հետո գյուղը վերանվանվել է՝ Զեդեա:

Բոլոր ժամանակներում գյուղի հիմնական եկամտի աղբյուրը եղել է հողագործությունը և անասնապահությունը:

Գյուղն ունի դպրոց և բուժկետ :